ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- նոյեմբերի 2020 թվականի №---Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի №337Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2013 թվականի հոկտեմբերի 2-ի №337Ա որոշմամբ «Քարե Հովիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է «Շենիկ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0513 լիցենզիան (այսուհետ՝ Լիցենզիա)՝ մինչև 2029 թվականի սեպտեմբերի 24-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2020 թվականի հոկտեմբերի 14-ը,

բ) Հանձնաժողովի 2020 թվականի փետրվարի 12-ի №25Ա որոշմամբ Լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգվել է մինչև 2020 թվականի հոկտեմբերի 14-ը, ինչի համար նույն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով Ընկերությունը պարտավորեցվել է այն ուժի մեջ մտնելու պահից քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 1,487,500 (մեկ միլիոն չորս հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր) դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2020 թվականի նոյեմբերի 28-ը գործողության ժամկետով, ինչը Ընկերության կողմից չի կատարվել,

գ) Հանձնաժողովը 2020 թվականի ապրիլի 29-ի №150Ա որոշմամբ Հանձնաժողովի 2020 թվականի փետրվարի 12-ի №25Ա որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի խախտման հիմքով կասեցրել է Լիցենզիայի գործողությունը՝ մինչև խախտման պատճառի

վերացումը՝ այն է 1,487,500 (մեկ միլիոն չորս հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր) դրամ գումարի երաշխիք ներկայացնելը, սակայն Ընկերությունը մինչև Լիցենզիայով ամրարգված կառուցման ժամանակահատվածի ավարտը չի վերացրել Լիցենզիայի կասեցման համար հիմք հանդիսացած խախտումը,

դ) Հանձնաժողովը 2020 թվականի հոկտեմբերի 19-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 30.1 հոդվածի 2-րդ մասի «գ» կետի հիմքով Լիցենզիայի գործողությունը դադարեցնելու հարցի քննարկման նպատակով, որի մասին Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2020 թվականի հոկտեմբերի 19-ի №ԳԲ/34.1-Մ2-5/4368-2020 գրությամբ,

ե) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը որևէ հիմնավորում կամ փաստարկ չի ներկայացրել,

զ) «Էներգետիկայի մասին» օրենքի 30.1 հոդվածի 2-րդ մասի «գ» կետի համաձայն՝ լիցենզավորված անձի գործունեության լիցենզիան կարող է դադարեցվել նաև այն դեպքում, երբ արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածում Հանձնաժողովը կասեցրել է արտադրության լիցենզիան, և արտադրության լիցենզիա ունեցող անձը մինչև կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածի ավարտը չի վերացրել արտադրության լիցենզիայի կասեցման համար հիմք հանդիսացած խախտումը, Հանձնաժողով չի ներկայացրել համապատասխան հիմնավորող փաստաթղթեր, և Հանձնաժողովը չի վերացրել արտադրության լիցենզիայի կասեցումը,

է) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարն ամբողջությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե որոշում է ընդունել արտադրության լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին,

ը) Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 9-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 6-րդ կետով նախատեսված որոշման ընդունման դեպքում, երբ լիցենզավորված անձի կողմից նախկինում Հանձնաժողով երաշխիք չի ներկայացվել, նույն կարգի 6-րդ կետով նախատեսված

գումարի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու պարտավորությունը կրում է լիցենզավորված անձը,

թ) իրականացված վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ Ընկերությունը մինչև Լիցենզիայով ամրարգված կառուցման ժամանակահատվածի ավարտը չի վերացրել Լիցենզիայի կասեցման համար հիմք հանդիսացած խախտումը, Հանձնաժողով չի ներկայացրել համապատասխան հիմնավորող փաստաթղթեր, և Հանձնաժողովը չի վերացրել Լիցենզիայի կասեցումը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30.1 հոդվածի 2-րդ մասի «գ» կետը, Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետը և 9-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 2-ի «Քարե Հովիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Շենիկ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №337Ա որոշումը:
2. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում 900005028130 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել 1,487,500 (մեկ միլիոն չորս հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր) դրամ գումար:
3. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ այն ստանալու պահից 15 օրյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- նոյեմբերի 2020թ.